Հակոբ Հակոբյան



ՀՀ ժողովրդական գեղանկարիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արժանացել է Ս. Մեսրոպ Մաշտոց, Հայ եկեղեցու Ս.Սահակ և Ս. Մեսրոպ շքանշանների:

Ծնվել է 1923թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում:

Ուսանել է Կիպրոսի Մելքոնյան վարժարանում:

1944-48թթ. սովորել է Կահիրեի գեղարվեստի ակադեմիայում:

1952-54թթ. մասնագիտական կրթությունը շարունակել է Փարիզի Գրան Շոմիե ակադեմիայում:

Մասնակցել է Երիտասարդության և ուսանողների համաշխարհային IV փառատոնին (1953, Բուխարեստ, 2-րդ մրցանակ), արդի եգիպտական արվեստի (1958, Մոսկվա, Լենինգրադ) ցուցահանդեսներին, Ալեքսանդրիայի բիենալներին (1959, 1961):

1962-ին ընտանիքով հայրենադարձել է Հայաստան:

Ստեղծագործական առաջին շրջանում ստեղծել է նատյուրմորտներ՝ տխրության ու առանձնության տոնայնությամբ: Օտարության մեջ ապրելու տարիներին հիմնականում նկարել է թեմատիկ նկարներ՝ ընդհանրացնելով հետեղեռնյան սերնդակիցների հոգեվիճակը: Բնանկարների ենթատեքստում անհանգիստ ժամանակի լարվածության ու տագնապի զգացմունքներն են:

Ստեղծագործություններից են՝ «Կինը խոհանոցում» (1959), «Սխտորներ» (1961), «Վիշտ» (1961), «Դերձակը» (1962), «Գարուն» (1969), «Անդորր» (1970), «Մալիշկա գյուղը» (1970), «Ջրանցքի մոտ» (1972), «Իմ արվեստանոցը» (1983), «Սումգայիթ»(1989), «Գործիքներ» (1998), «Հանրապետության հրապարակ» (2001), «Բուժքույրը» (2003), «Վիրուսներ» (2003), «Դեր Զորում զոհված մեծ հորս՝ Սարգիս Եսայանի հիշատակին» (2004) և այլն:

Ապրում և ստեղծագործում է Երևանում: